ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻԱՋԱԿՑՄԱՆԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«21» դեկտեմբերի 2016թ.

Հաստատումեմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-121/16 բողոքը քննող

Հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Յուքոմ» ՍՊԸ-ի 09.12.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Յուքոմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Յուքոմ» ՍՊԸ-ն 09.12.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կողմից «Օպտիկամանրաթելային կապուղու տրամադրման ծառայություն» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ՇՀԾՁԲ-17/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ)՝ www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.11.2016թ. ժամը 11:00 նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած

մասնակից, որից հետո 25.11.2016թ. ժամը 17:30 նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Պատվիրատուն անհիմն կարգով իրականացրել է հայտերի կրկնակի գնահատում, ինչը ըստ բողոքաբերի բացարձակապես նախատեսված չէ գնումների մասին ՀՀ գործող օրենդրությամբ:

«Յուքոմ» ՍՊԸ-ն, որպես բողոքի իրավական հիմք /ապացույց/, վկայակոչել է ՀՀ գործող Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

«Յուքոմ» ՍՊԸ-ն տեղեկացրել է նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից իրականացրած անհիմն կրկնակի գնահատման արդյունքում իբրև թե արձանագրվել է խախտում, այն է՝ «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը հաստատվել են Կ. Ասատուրյանի կողմից, սակայն հայտում բացակայել է «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից վերջինիս տրված լիազորագիրը՝ հրավերով սահմանված փաստաթղթերը ստորագրելու իրավասության վերաբերյալ, որից հետո Պատվիրատուն մերժել է «Յուքոմ» ՍՊԸ-ի հայտը և առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ին՝ դրանով իսկ պետությանը փաստացի վնաս հասցնելով 594 000 (հինգ հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամի չափով:

Ըստ «Յուքոմ» ՍՊԸ-ի՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կայացրել է անիրավաչափ որոշում՝ հիմք ընդունելով և սխալ մեկնաբանելով ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի մասին» 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ հոդվածի 4-րդ կետը, որի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:

«Յուքոմ» ՍՊԸ-ն նշել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թիվ 3 արձանագրությամբ մերժել է «Յուքոմ» ՍՊԸ-ի հայտը ոչ թե հայտերի բացման նիստում, ինչպես նախատեսված է ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի մասին» 168-Ն որոշմամբ, այլ ինչ-որ անհասկանալի և գործող օրենսդրությամբ չնախատեսված հայտերի կրկնակի գնահատման նիստում:

«Յուքոմ» ՍՊԸ-ն տեղեկացրել է նաև, որ Ընկերության կողմից գնային առաջարկը ներկայացվել է հրավերի պահանջներին ամբողջությամբ համապատասխան, քանի որ հրավերով սահմանված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են: Ընդ որում, հրավերով որպես պահանջ անգամ չի սահմանվում հրավերով սահմանված փաստաթղթերը ստորագրելու իրավասությունը հաստատող որևէ ապացույցի ներկայացումը:

«Յուքոմ» ՍՊԸ-ն գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է չեղյալ հայտարարել 2016թ. նոյեմբերի 25-ի «ԵՔ-ՇՀԾՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի նիստի թիվ 3 արձանագրությունը՝ հայտերի կրկնակի գնահատման և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ին մրցույթի առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու վերաբերյալ:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 15.12.2016թ. ժամը 17:00-ին ԳԲԽ-121/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերությունը չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) «Յուքոմ» ՍՊԸ-ի 09.12.2016թ. բողոքի վերաբերյալ 16.12.2016թ. թիվ 02/61-28810 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/6» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին մասնակցած Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատելու ժամանակ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը /այդ թվում գնային առաջարկը/ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատվել են Կ. Ասատուրյանի կողմից, սակայն հայտում բացակայել է Ընկերության տնօրենի կողմից վերջինիս տրված լիազորագիրը՝ հրավերով սահմանված փաստաթղթերը ստորագրելու իրավասության վերաբերյալ: Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետով, մերժել է «Յուքոմ» ՍՊԸ-ի հայտը: Ընկերության շահերից է բխում այն պնդումը՝ մեջբերում. «Պատվիրատուն անհիմն կարգով իրականացրել է հայտերի կրկնակի գնահատում, ինչը

բացարձակապես նախատեսված չէ գնումների մասին ՀՀ գործող օրենսդրությամբ», սակայն գնահատող հանձնաժողովը կատարելով կրկնակի գնահատում՝ «Յուքոմ» ՍՊԸ-ի մասով, կանխել է իր իսկ կողմից թույլ տրված բացթողումը, որը նույն գործող օրենսդրությամբ չի արգելվում: Ինչ վերաբերում է Ընկերության այն դիտարկմանը, որ վերջինիս կողմից չի խախտվել կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված դրույթը, քանի որ ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ, ուստի տարօրինակ է Ընկերության պահանջը՝ փաստաթղթերում առկա անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն չտրամադրելու վերաբերյալ ներկայացված պահանջը»:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ մեջբերում է արել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ «Լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար»: Միևնույն ժամանակ մեջբերում է արել «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի3-րդ մասի «բ» կետը, որի համաձայն՝ Ընկերության գործադիր մարմինը՝ տալիս է լիազորագրեր՝ ընկերության անունից ներկայացուցչություն կատարելու իրավունքի համար, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր:

Պատվիրատուն գրությամբ տեղեկացրել է նաև, որ գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումը իրավաչափ է և խախտում առկա չէ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն նշել է, որ գնահատող հանձնաժողովը «Յուքոմ» ՍՊԸ-ի հայտը մերժելով, առաջնորդվել է այն հանգամանքով, որ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հրավերով պահանջվող փաստաթղթերը (գնային առաջարկը և հայտի ապահովումը) համարվել են ոչ վավեր, որոնք Կարգի 45-րդ կետի համաձայն՝ ենթակա չեն շտկման:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 15.12.2016թ. ժամը 17:00-ին ԳԲԽ-121/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-121/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-121/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «Օպտիկամանրաթելային կապուղու տրամադրման ծառայություն» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ՇՀԾՁԲ-17/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով, հայտ է ներկայացրել «Յուքոմ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.11.2016թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝

○ 1.2-րդ կետ՝ «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված յուրաքանչյուր բացված հայտում պահանջվող փաստաթղթերը առկա են:

○ 1.3-րդ կետ՝ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են սահմանված պայմաններին համապատասխան:

○ 1.6-րդ կետ՝ «Յուքոմ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.11.2016թ. ժամը 17:30-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը՝ ***կրկնակի գնահատելով*** «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը, արձանագրել է հետևյալ խախտումը. «Փաստաթղթերը /այդ թվում գնային առաջարկը/ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատվել է Կ. Ասատուրյանի կողմից, սակայն հայտում բացակայել է «Յուքոմ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից վերջինիս տրված լիազորագիրը՝ հրավերով սահմանված փաստաթղթերը ստորագրելու իրավասության վերաբերյալ: Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետով, մերժել է «Յուքոմ» ՍՊԸ-ի հայտը և առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ին:

4. ԳԲԽ-121/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Յուքոմ» ՍՊԸ-ի 09.12.2016թ. ներկայացրած բողոքը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, Երևանի քաղաքապետարանի 16.12.2016թ. թիվ 02/61-28810 գրությունը, Ընթացակարգի հրավերը (այսուհետև նաև՝ Հրավեր), «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), հայտնում է հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Կարգի 12-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը բացում և գնահատում է հայտերը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է

նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝ ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» ուղղ. պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին.

Ընթացակարգի հրավերի 7.2.1 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.11.2016թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝

- ***1.2-րդ կետ՝ «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված յուրաքանչյուր բացված հայտում պահանջվող փաստաթղթերը առկա են:***
- ***1.3-րդ կետ՝ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են սահմանված պայմաններին համապատասխան:***
- ***1.6-րդ կետ՝ «Յուքոմ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:***

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.11.2016թ. ժամը 17:30-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ***գնահատող հանձնաժողովը՝ կրկնակի գնահատելով «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը***, արձանագրել է հետևյալ խախտումը. «փաստաթղթերը /այդ թվում գնային առաջարկը/ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատվել է Կ. Ասատուրյանի կողմից, սակայն հայտում բացակայել է «Յուքոմ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից վերջինիս տրված լիազորագիրը՝ հրավերով սահմանված փաստաթղթերը ստորագրելու իրավասության վերաբերյալ: Գնահատող

հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետով՝ մերժել է «Յուքոմ» ՍՊԸ-ի հայտը և առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ին:

Այսպիսով, Կենտրոնը արձանագրում է, որ Պատվիրատուն հայտերի բացման նիստում բավարար է գնահատել «Յուքոմ» ՍՊԸ-ի հայտը և վերջինիս ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, այնուհետև՝ բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը, իրականացնելով *արդեն իսկ բավարար գնահատված հայտի կրկնակի գնահատում* մերժել է Ընկերության հայտը:

Կենտրոնը գտնում է, որ նման փաստական հանգամանքների պայմաններում Պատվիրատուի կողմից խախտվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության և Ընթացակարգի հրավերի վերոշարադրված պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Յուքոմ» ՍՊԸ-ի 09.12.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել՝ դադարեցնել 2016թ. նոյեմբերի 25-ի «ԵՔ-ՇՀԾՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի նիստի թիվ 3 արձանագրությունը՝ հայտերի կրկնակի գնահատման և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ին մրցույթի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու վերաբերյալ:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-121/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Տ.Գևորգյան